



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 03L

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

2018թ. նոյեմբերի 8
ք.Երևան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով).

1.1. Հանձնաժողովը կազմված է ութ անդամից, որոնք իրենց կազմից ձայների մեծամասնությամբ ընտրում են հանձնաժողովի նախագահ:

1.2. Հանձնաժողովի նախագահի փոփոխությունը կատարվում է Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

1.3. Հանձնաժողովի գործունեությունն ապահովում է Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատավորների ընդհանուր ժողովի և հանձնաժողովների գործունեության ապահովման բաժինը (այսուհետ՝ Սպասարկող անձնակազմ):

1.4. Հանձնաժողովը կարող է ունենալ կլոր կնիք, որի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, շուրջը հայերեն լեզվով գրված է «Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով» բառերը:

2. Հանձնաժողովի նախագահը.

2.1. Հանձնաժողովի նախագահը ղեկավարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը:

2.2. Հանձնաժողովի նախագահը վարում է Հանձնաժողովի նիստերը, Հանձնաժողովի անդամներին (այդ թվում՝ նաև իրեն) մակագրում է ստացված հաղորդումները, Հանձնաժողովին ներկայացնում է Հանձնաժողովին ուղղված տեղեկությունները:

2.3. Հանձնաժողովի նախագահը քվեարկությունների ժամանակ ունի Հանձնաժողովի անդամին հավասար ձայնի իրավունք:

2.4. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ տվյալ հարցի քննարկմանը չմասնակցելու դեպքում հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը

ղեկավարում է Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ ընտրված Հանձնաժողովի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը:

3. Հանձնաժողովի նիստերը.

3.1. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է դռնփակ նիստերի միջոցով, որոնք, ըստ անհրաժեշտության, հրավիրվում են Հանձնաժողովի նախագահի կողմից:

3.2. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են Դատական դեպարտամենտի կողմից Հանձնաժողովին տրամադրված վայրում:

3.3. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են Հանձնաժողովի որևէ անդամի կամ Հանձնաժողովի հանձնարարությամբ Սպասարկող անձնակազմի կողմից:

3.4. Հանձնաժողովն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Հանձնաժողովի անդամների մեծամասնությունը:

3.5. Հանձնաժողովի նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ Սպասարկող անձնակազմի կողմից Հանձնաժողովի բոլոր անդամներին տրամադրվում են Հանձնաժողովին հասցեագրված բոլոր դիմումների, հաղորդումների, միջնորդությունների և ձեռք բերված նյութերի պատճենները, ինչպես նաև դրանց վերաբերյալ կազմված տեղեկանքները:

3.6. Հանձնաժողովում ստացված դիմումների, հաղորդումների, միջնորդությունների, ինչպես նաև Հանձնաժողովին հայտնի դարձած տեղեկությունների ուսումնասիրությունը Հանձնաժողովի նախագահը հնարավորինս ըստ մասնագիտացման և հավասարաչափ մակագրում է Հանձնաժողովի անդամներին:

3.7. Հանձնաժողովի զեկուցող անդամը նիստի ժամանակ իրեն մակագրված հարցն ուսումնասիրում է մինչև հաջորդ նիստի հրավիրումը: Հանձնաժողովի զեկուցող անդամն իրեն մակագրված հարցի վերաբերյալ զեկուցում է Հանձնաժողովին:

3.8. Հանձնաժողովի կողմից լրացուցիչ ուսումնասիրության կամ լրացուցիչ ապացույցներ ձեռք բերելու անհրաժեշտությամբ պայմանավորված հարցի քննարկումը կարող է հետաձգվել:

4. Հանձնաժողովի որոշումները և դրանց ընդունման կարգը.

4.1. Հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում հարցի քննարկման արդյունքում կայացնում է կարգապահական վարույթ չհարուցելու, կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթը կարճելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին որոշումներ:

4.2. Հանձնաժողովի որոշումն ընդունվում է բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի որոշումն համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է Հանձնաժողովի անդամների մեծամասնությունը: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի ձեռնպահ մնալ քվեարկությունից:

4.3. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշմանը դեմ քվեարկած անդամն իրավունք ունի ստորագրել այն, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում պարտավոր է ներկայացնել պատճառաբանված հատուկ կարծիք, որը հանդիսանում է ընդունված որոշման անբաժանելի մասը:

4.4. Հանձնաժողովում քննարկվող հարցը Հանձնաժողովի անդամին վերաբերելու դեպքում Հանձնաժողովի տվյալ անդամը չի մասնակցում Հանձնաժողովի նիստին՝ հարցի քննարկմանը և որոշման կայացմանը վերաբերող մասերով:

4.5. Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ չհարուցելու մասին՝ Հանձնաժողովի նիստում անդամների կողմից քննարկելուց և քվեարկելուց հետո կայացվում է արձանագրային որոշում:

4.6. Կարգապահական վարույթ չհարուցվելու մասին որոշում կայացնելիս Հանձնաժողովը հաղորդում ներկայացրած անձին տալիս է պատճառաբանված գրավոր պատասխան, որը ստորագրում է Հանձնաժողովի նախագահը:

4.7. Հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթը կարճելու կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին որոշումները կայացվում են Հանձնաժողովի նիստում անդամների կողմից քննարկելուց և քվեարկելուց հետո ու դրանք պետք է շարադրված լինեն առանձին փաստաթղթերի ձևով՝ ստորագրված Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած անդամների կողմից:

4.8. Առանձին փաստաթղթերի ձևով Հանձնաժողովի որոշումը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

4.9. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և գրավոր պատասխանների բնօրինակները կցվում են վարույթին և պահվում են Դատական դեպարտամենտում:

5. Սպասարկող անձնակազմը.

5.1. Սպասարկող անձնակազմը պարտավոր է պահպանել գաղտնիություն Հանձնաժողովում քննարկվող բոլոր հարցերի վերաբերյալ: Նման գաղտնիության չպահպանման դեպքում Սպասարկող անձնակազմի համապատասխան աշխատակցի վարքագծի վերաբերյալ Հանձնաժողովը տեղեկացնում է Դատական դեպարտամենտի ղեկավարին՝ համապատասխան աշխատակցի վերաբերյալ օրենքով սահմանված

պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցը քննարկման առարկա դարձնելու համար:

5.2. Սպասարկող անձնակազմը, ստանալով Հանձնաժողովին հասցեագրված դիմումները, հաղորդումները և միջնորդությունները, մեկ շաբաթյա ժամկետում ձեռք է բերում իրեն հասանելի անհրաժեշտ նյութեր և դրանց վերաբերյալ կազմում է տեղեկանք:

5.3. Սպասարկող անձնակազմը Հանձնաժողովի անդամներին տրամադրելու համար մեկ շաբաթյա ժամկետում նախապատրաստում և տրամադրում է ներկայացված դիմումների, հաղորդումների, միջնորդությունների, ձեռք բերված հասանելի անհրաժեշտ նյութերի և կազմված տեղեկանքի պատճենները:

5.4. Սպասարկող անձնակազմը Հանձնաժողովի հանձնարարությամբ եռօրյա ժամկետում կազմում է որոշումների, գրավոր պատասխանների և այլ գրությունների նախագծերը և ներկայացնում Հանձնաժողովին:

5.5. Սպասարկող անձնակազմը Դատական դեպարտամենտի Ընդհանուր բաժնի կամ Առաջին բաժնի միջոցով իրականացնում է փաստաթղթերի առաքում՝ առձեռն կամ փոստային առաքման միջոցով: Փոստային առաքման դեպքում փաստաթղթաշրջանառությունը կատարվում է հետստացման հավաստագրերի միջոցով:

5.6. Սպասարկող անձնակազմը Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների պատճենները տրամադրում է Դատական դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանմանը՝ համապատասխան դատավորի անձնական գործին կցելու համար: